

ՀԱՆԴԵՍ ԳՐԶԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԲԺՇԵԱՐԱՆՔ

ՄԱՐԿԱԿԱՆԱԾՄՈՒԹԻՒՆ

(Շար. տես էջ 314)

Սքթա. Ֆալիմ. Թաշանուն. Լակուա. Բուահշան. Եսակիկա. այս բառերը կը գրաւանք «մօտն գինի խմելոյ» պարբերութեան մէջ. ամէն ալ առանձին հիւանդութեանց անուններ են: Բէ իշկարանի այդ էջն (64—62) մի քանի տող յիշելով, կ'ուզենք ցոյց տալ թէ նախնի բիշկները գինիի գործածութեան մասին Բնշ առույշբանական գաղափարներ ունին: Կը կարդանք. «Զաքարիայի որդին առ թէ որ զգինին չափով խմէ, և օգնու թինն այն է որ առաջին զանձն տաքցնէ (Բնշ կըսէ «Մի խմիր» զհաշտական հե. զինակը բռնկապեա Սրծբունին), և զկերաւ կուրն հալէ, և զքնական տարութիւնն զօրացնէ, և զկերակրին ուսն ի անձն ցրուէ, և զայրինն պայծառ առնէ. և զգնութիւնն տանի և թէ զինքն աղէկ կերակրի վրայ խմես զլրին գիծութիւնն ի անձն ճապդի. և անուշ քուն առնէ. և զսիրտն խղպացնէ (սմանց տերեցնէ) և այս առնեսայն այն ժամ լինի, որ զինք չափաւոր լինի խմին» — զիտել կու տանք չափաւոր բառը — «և յորժամ տելի և չափու անձնի և հարբեա նա. այսու հակառակն լինի. և այս ամենաւ շահն զնն դառնա և յօգուածքն վատուցնէ, և զինքն կորցնէ, և ի պեղծ հիւանդութիւն բերէ, որ սկսի տեղ չի լինի անճարակ» — Զաքարիայի որդւոյ զպաշտարարն այս է, յիշենք մի այլ ժանտիք Բիշկի խօսքերն, սուր գործածուած են վերոյիշեալ ախտանիշ բառերն. — «Գե. զիտեսսն առ թէ բնութեան զիրքն. գինի խմելն շատ ազգի ցաւեր առ մարդն բնծայէ, որպէս սքթա (կը նշանակէ Մահամբը հիւանդի մը սենեցած չղաց քաշորթիւն), Ֆալիմ, (կազմեաւար = մէկ կողմն մնիլ, թաւաշաղ,

մանաւանդ պիտոյ, հեռաց, ոտից) Թաշանուն (Զղաճգորթիւն = Զղաց քաշորթիւնն) և որ ի զուին ի շուրջ դայ (զիւի պտայա), Լակուա (կզակարսպտորթիւն = ծոմնիկը կզակի), և Բուահշան (Զեռաց ստից գողոյ. Զու. Թ) զխաղալութիւն և Եսակիկա (կէս զխալալա?) և ուրեք որ ի լերդն լինի, բշտեր և խօցեր մեծամեծ, և կաշուած ի անդամն, և ան ցաւերն, որ ժամանակաւ չերգա ի մարդէն, և յետոյ մեռանի ի այն ցաւոյն»։ Յառաջ կը վարէ բիշկական խրատները և կը պատահիր թէ որ բնութեան տէր անձինք պէտք են զինի խմելէ զշուշանալ, և թէ հակառակ այդ պատուիրին որչափ հիւանդութիւնը յառաջ կու գան։

Խոնկաւ համարիչ է արար. Եւ խաւար բառին, որ կը նշանակէ զինովութենէն առաջ եկած զուարճութեան՝ յաջորդող տերութիւնը։ «Շատոց զխաղալութիւն բերէ, խոսմար, և այնոր համար որ ...» (էջ 62)։

Պնսնորի ջուր, որովայնի պնդութեան դարման տառնալն պատուէրներուն մէջ կ'ըսէ (էջ 64). «Եւ եթէ լինի որ փորն պինտ, պիտի որ առաւ ամբար ջուրն, և զպաւնորին ջուրն ...»։ Ըսել կ'ուզէ Պանիրի (Փենիր) ջուր։

Ընդհան (էջ 64) ուրիշ բիշկարաններու մէջ գրուած է նաեւ Ռզիան, Ռազիան (Թրք. Ռեզեկէ ) արար. Ռազիեհէ. բոտ Ա. միրա. Պրսկ.  Պատիեհան որ Պրսկ. Հայ բառարանի մէջ, Պր. Բազպաւ բառին հոմանիշ բնորոշուած է և իրրեւ Մամիք բառը նշանակող)։ Ամբարտալաւ այս բառի մասին՝ գրած է հետեւեալն. «Ընդհան ... Երկու ցեղ կու լինի, վայրի և տեղաց. բան այն է որ դալար և մատաղ լինի ... Իսպ. առէ, թէ առաջին նախահայրն Աղամ տացն է թէ մարդ մ'որ զարնառն առաջին օրն արեգակն ի խոյն մտնու մինչեւ ի խոց դեպին երթայ, որ է ամենաւ առջի օրն, յամէն օր մէկ մթնալ Ըզգիանի հոնա, մէկ մթնալ Շաքար խառնէ և ուտէ նա, մէկ տարի ան մարդն հիւանդութենէ անհոց լինի և առողջանայ։ Եւ այլ զարմանալի բան մ'այլ այս է, յորժամ ձմեռն լինի՝ օձերն ի գետինն ներքեւն կու մտնուն և պտուկին և կուր, աշկին չի

տեսնուլ. և յորժամ գարուն լինի՝ կուր ի գուրս կ'էտանեն և կ'երթան Ըզգիսնէն կու գանուն, և զորն կ'ուտեն և զորն աղիցն կու փնեն, և աշլին կու բացվի, և արարելն Աստուած զան օձերո՝ տեսութիւն ի յայս խոստ է զրել, և նմա փառք յաթեանսն»։ Ասոր նման վկայութիւն մ'ալ կը կարգադր Մեծն Բարսեղ Կեսարացայ գրքին մէջ (Վեցոր. Թ.)։ «Օձի աչք յորժամ ցափցեն, երթայ ուտէ զուժրայ, աչիսնքն ստմիթ վայրենի, և սղջանայ»։

Յիշեալ բառն Ըզգիսն ուսմիկերն է, որուն իբրեւ համանիշ գրականութեան մէջ գործածուած է Մամիր, բոս Եւրայրի Հոռոմ Սամիր. գլ. Fenouil. յն. Ανήζον կամ Μάρσρον. Բոս. Anethum կամ Marathrum, Լու. Foeniculum. Իս. Finocchio։ Այս օտար բառերը բժշկարանաց մէջ տառապարձուք են Անեքոն, Մարարոն։

Ղօթիւն. Կը նշանակէ աչեաց ցաւ և ուսոյց. բոս բժշկարանին «եթէ բնութիւնն կալուել, և ուզենա որ արտաքս ելանէ, և լիւ արդիւնս Ղօթիւնի առնէ, և չուզենա կերակար բնաւ»։ Կը յիշէ նաեւ այդ պատճառս որով ինչ հիւանդութիւններ որ յառաջ կու գան։ Տես Ղաշիւնէ։ (Էջ 28)։

Սուճիկ. բոս բժշկարանի նկարագրին՝ այս բառը կը նշանակէ Թրք. մայասիշ. որուն իբրեւ համանիշ կը գործածուին շիննու բոսերն Արիւնէրբուրիւն, Թրախտուրիւն. Թռաք. և այլն. գլ. Hémorrhoides. «Եթէ շատ լինի նստել նա սուճիկ առնէ»։

Մրտմրթիւն. էջ 65 «սիրուն կնիկացնէ, և բարկութիւնն ի սրաւն տանի, և մրտմրտութիւնն այլ տանի» գուցէ ըսել կ'ուզէ մատց՝ ծրութիւն։

Մալախուլիա. էջ 65 «և օգտակար է Մալախուլիայի տիրոջն» կը նշանակէ Մալախիալ (Լուսնոս. տն. Թարարգըր. Epi-leptique). Խեւութիւն. Երեւակայութիւն։

Երթուս նման պարակերէն համանիշ Լոյջաճ Եօրպա բառին, որ կոչի նաեւ Եօրպա, Խպա, Խպակ, Եօրպա, Եօրպա և Երթու. հայերէն գործածուած համանիշն է Թան (էջ 67), «Պարտ է որ ց օր առաջ շօրառ ուտեն», Թրք. Զօրպա։

Մատպուխ արար. բառ է և կը նշանակէ մեր հայերէն խաշոյ բառը, գալ. Décoction. կոչի նաեւ Մտպուխ. (էջ 67)։

Սուֆուֆ. պրսկ. صفا Սիֆուֆ բառին հետ նայն է։ Պարսկ-Հայ բառարանն այդ բառն հետեւեալ կերպով կը սահմանէ. «է յայտնի զի ինչ առ բժշկոյն. զի զմատուոս զեղարկից մանր լեւեալ, ի գործ ածեն որպէս զփոշի։ Եւ եւս է խոտ իմն՝ զոր կոչեն Խօսաւանի, որ օգտակար է յայ ի վարել արտաքս զճնի որովայնի»։ Բժշկարանը «սաֆութիւն տիրոյն» կ'ապսպրէ և լաւ կը համարի մատպուխ, սուֆուֆ, և շապն։

Պրզաւտուն Արար. Լوچوچ Զ Պրզը ելքարունա։ Բոս Հայրուստի, կոչի նաեւ Բզրախուն, Կառախաւա։

Սրտածամ. Կրնանք ըսել որ բժշկարանին մէջ գտնուած նորակազմ բառերէն, աւանդն ընտրեաներէն մին կամ ընտրելագոյնն սա է, զոր իբրեւ համանիշ կրնանք զնել գլ. Palpitation նոյնանիշ բառին առջև. մինչեւ ցարկ իբրեւ համանիշ գործածուած են հին բառերն Բարախաւն (սրախ). Թռաք, Թեղիւն. սրունք կը զերպասենք Սրտաժամ բառը, որ թէ՛ լաւ կալմուած է և թէ՛ հիւանդութեան ճիշդ և ուղղակի բացատրութիւնն է։

Ղարուրա գաւառակոն բառ, կը նշանակէ փաշէ «և յորժամ որդի դարձնաւ առնես, լիւր որ պահէ կենա, և թէ աւաղ կամ պղտորութիւն կայ ի տակն իջնու դարձնա, յիւն, և ապա խմանա ցաւուն հիւն»։ (էջ 84)։

Քունն կը նշանակէ Ալիլիւն, աղաւղուցն՝ է պարսիկ خن քիւնն համանիշին. էջ 103 «և ի տան քուննն նստելն», տան մէկ անկիւնը քաշուիլն ըսել կ'ուզէ։

Սիւ պրսկ. Ժա Սիլ կը նշանակէ Բալակացաւ։ (էջ 103)։

Մեռք յիշեցինք բուն մարդակազմութեան մէջ գտնուած խորթ ու հարազատ բառերն, որ կը պակսին մինչեւ ցարկ հասարակուած գրքերու մէջէն. իւրաքանչիւր բառերու մեկնութենէն՝ ընթերցողն անտարակոյս հասկըցաւ, թէ այն նոր բառերէն որը կրնանք մեր գործնական գրականութեան մէջ ընդունիլ։

և զործածել: Այդ բառերէն մեծ մասը արար կամ պարսիկ բառեր են, որոնց զործածու լինելն բոս մեր նախնեաց, պէտք չենք խորշիլ, ելի՛ չունիւրք անոնց համանիշ ծանօթ բառերն: Քիչ են բշկարանիս մէջ զանաւած անծանօթ հարազատ հայ բառերն, որոնցմէ մի քանիին այնքան լաւ կազմուած են, որ նախածանօթ ընդունուած համանիշներու տեղին կրնան փոխանակել: Այժմ՝ բշկարանիս զեղօրէից բա՛նէն կը յիշատակենք այն մի քանի ուսումնական բառերն, որոնք Եւրոպական լեզուէ փոխ առնալ են, և տառադարձու լծաւք զործածուած: Հրատարակելով այդ բառերը, մենք ցոյց պիտի տանք լմէ ոտար բառերու զործածութիւնն ո՛չ միայն նախնիք, այլ և վերջնադարեան ուսումնական անձինք հարկ եղած ժամանակ չեն խորշած. և զանոնք ընդունենք են առանց նոր ու կաշկանդուած բմածին բառեր ստեղծելու:

Ամենիսք. Մեր ներկայ ուսումնասիր անձինք, դիտեն արդէն լմէ այս բառը լմելու ունենայ իր մի քանի հոմանիշները, սակայն շատերն լաւ համարած են ընդունիլ այդ բառը իբրեւ միջազգային և հանրացած. ուստի լմէ՛ խօսակցութեան և լմէ զրուանոց մէջ ընդհանրապէս՝ զայն կը զործածեն: Բառիս ստուգաբանութեան մասին տես «Բազմավոյ» 1898. էջ 564: Հին հոմանիշն է Ա շուկ, Անուշադր:

Փօլգօզար. (գլ. Colcotar). Ի բառագիրս կոչուեր է նաեւ Կոլկոտար, Այստե արշասպ (Քալ.) Կալկոտար «Կալկոտար. այրած արջասպ օթիցից = Ուխտիցի». (բշկ.) Փերոքսիտ երկարի? (Լուս.) Կարչ չօթեան մէջ կը կոչուի նաեւ Կարմիր Անգղիոյ կամ Բրաւուիոյ Ronde d'Angleterre կամ de Prusse. — Քօլքօրտր (Վիլթրիօրի), Կոլքօրտր. Երկարաճող՝ կը գրէ մի դար առաջ Հրատարակուած բշկարան մը. «Այս անունը ան հարկն կու տանք, որ կը մնայ իմպիկին տակը սառնէր անոնէ լէն ետեւ. ասոր լծալը կը ցանենք խոցերու վրայ, որ մամուլները կիցընել տանք» — (Հմմտ. «Նիւթ բշկական» էջ 124. Յովհ. բշկ.). Օլուլուիտեան, Վենետիկ 1806):

Տխանդերիա, գլ. Dyssenterie Մանուկ

Պոնտացին այդ բառը փոխ տոնր է, իս. Dissenteria հոմանիշէն: Մեր բառադրոց մէջ այդ բառին իբրեւ նոյնանիշ զործածուած են Քանչը. Ախտ Քանչից, Քանչակալ ախտ, Քանչախտ, Վատաղուծիւն (յն. ծսսենտրիա = ծոց վատ և էնտերո աղիք): Բնական իր բառադրերն մէջ կը շարէ Տիւսկերեա (իս.), Տիւկերեիա սուսքրիչիս (լտ.), Քան իսալը (տհ.), Խուսիսիւ (պրսկ.), Ջիսիս իլ տեմ (արաբ.), և բոտ մեղ՝ Արիւնախաւս փորձարտերիւն, կամ Քանչախաւս նրաւ պոպայնաճոտերիւն, կամ Արիւնախիւ նրաւ պոպայնաճոտերիւն, և կամ Քարախալսիւն փորձազնացորիւն, և այսքան բառեր կազմուած են ուսումնական գիտութեան և նա մանաւանդ մեր մամուլին անծանօթ մնալու համար. ոմանք ընդհանրապէս կազմուած բառերու չհամեմտելով նորեր կը ստեղծեն. այլք՝ հիներուն տեղեակ չըլլալով, բառակազմութեան կը դիմեն. որով հոմանիշ բառերու կոյտ մը կը զիգեն, որ շատ անգամ լիզուած ազատազնու՝ բան լմէ հարստացրնելու կը ծառայեն. բոտ մեր տար կարծեաց, վերայիշեալ հոմանիշներէն կարող ենք զործածել կամ հին Քանչը բառն և կամ միջազգային և բոտ բշկարանին Տխանդերիա փոխառնալ բանն:

Տխազօտօ. իս. Diascordio (յն. ճիւ ընդ և լտ. scordium գարօշ [բայր] բառին տառադարձութիւնն է. Քարդամուտար կոչուեր է Ջարօշաղեղ (Քալ.) Տճ. Սարմուսաք մաճուռու: Բնական կը գրէ. «Է զեղ լանձրամած զօրէն լմիւրակնի, հոտաւտ, և ստուկահամ, միանգամայն և օգտաւտ ի դիպուածս ջգային ախալց, . . .» Հմմտ. Բշկականութիւն. Վենետ, 1832. էջ 376:

Այս բառերուն նման ուրիշ զապ. իտալ. և լատ. ուսումնական օտար բառեր կը զըսանոյն զեղօրէից բանին մէջ. և ամէն ալ տառադարձեալ են:

Հ. Ս. ԵՐԵՄԵՅԱՆ

